

եւեթ . Բ՝ եւ յուսով յարութեան փառաւորութեան .
 Գ՝ առնթեր գոլով կանայք ծանօթք . Դ՝ տեսանէր
 զկուրծս բախողաց եւ դարձողաց առ ի զեղջ մահու
 արգարոյն . Ե՝ լսէր ի բարբառողաց թէ Արդարեւ այրս
 այս որդի Աստուծոյ էր . Զ՝ լսէր զասելն աւազակին
 թէ Այսօր ընդ իս իցես ի դրախտին . Է՝ յուսադրու-
 թիւն իւրն՝ խոստանալով ինքնին զալ աւանդիլ զմա-
 քուր հոգին . Ը՝ զզղրդումն երկնից եւ երկրի լուեալ
 եւ տեսանէր . Թ՝ թէպէտ յիշէր զանցանելն գուր ընդ
 անձն իւր զբան Մերունոյն , ի միտ եւս բերէր ընդ բա-
 նից աւետման հրեշտակապետին թէ Քաղաւորութեան
 նորա վախճան ոչ գոյ . Ժ՝ լուեալ էր թէ յարուցիչ էր
 մեռելոց . լուեալ էր զարմունք ոմանց որ վասն Ղա-
 զարու՝ Ո՞չ կարէ սա որ եբաց զաչս կուրին՝ առնել
 զի եւ սա մի մեռցի , եւ առ քեռսն Ղազարու տսելն
 որդւոյն իւր թէ Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք .
 եւ զի մարթելի տսել ի լրոյ ծանուցեալ նմա աշա-
 կերտացն՝ թէ ասէր բազում անգամ որդի նորա թէ
 Պարտ է չարչարիլ եւ մեռանիլ ինձ եւ յերրորդ աւուր
 յառնիլ : Զայս հաստատէ հրեշտակն ի միաշարթւոջն
 առ Մարեմանս յասելն՝ Երթիջիք ի Գալիլեա եւ անդ
 տեսջիք զնա , որպէս ասացն ձեզ , այն էր թէ Յեա
 յառնելոյն իմոյ յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա .
 զի թէեւ Մարիամանք լուեալ էին , եւ ոչ կարէին պա-
 հել զնոյն յուսադրանս տալ Սրբուհւոյն :

Եւ արդ յիմ վերայ՝ ըստ ասիցն Յակոբայ եւ ըստ
 ասիցն Մարթայի՝ Գիտեմ զի յարիցէ յաւուրն յեա-
 նում , եւ մնամ հրովս անշիջանելի մինչ յելս շնոյս .
 ձերս մնացեալ եւ մատաղն ի հող գրաւեալ : Զի՞նչ էր
 օգուտ ի հողվայրս բարձրանալ արանց ի վերայ բար-
 ձրագունից գերեզմանաց առ ի տեսանիլ զբողոք հօրն
 տառապելոյ : Ոչինչ էր շահիլ՝ մանկունք ի ծառս ոս-
 տոց կախիլ ի տեսանել եւ ի լսել զներբողեան հօրս